ՀՏԴ 338.4

Կ.Մ. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Դիտարկվում են համաշխարհային քաղաքացիական ավիացիայի ժամանակակից վիճակը և զարգացման հեռանկարները:Ներկայացված են համաշխարհային քաղաքացիական ավիացիայի հիմնական ցուցանիշները: Աշխատանքում օգտագործվել է համաշխարհային քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունների՝ ICAO, IATA, UNWTO տարեկան հաշվետվությունները: Փաստվում է համաշխարհային քաղաքացիական ավիացիայի կարևորությունը տարածաշրջանի երկրների համար, հատկապես զբոսաշրջության ուղղությամբ, և տնտեսական ազդեցության նշանակությունը:

Առանցքային բառեր. համաշխարհային ավիացիա, ավիաընկերություններ, զբոսաշրջություն, ուղևորափոխադրումներ, բեռնափոխադրումներ, ՀՆԱ, երթևեկություն, ֆինանսատնտեսական, օդային տրանսպորտ, անվտանգություն:

Ներածություն. Քովիդ-19 համավարակի տարածումը բացասական ազդեցություն է թողել համաշխարհային տնտեսության և համաշխարհային ավիացիայի վրա: Հատկապես կարելի է առանձնացնել զբոսաշրջությունը, քանի որ ավիացիայով զբոսաշրջության հոսքը բավականին մեծ տոկոս է կազմում, հետևաբար՝ ներդրում ունի համաշխարհային ՀՆԱ-ում (նկ. 1):



Նկ. 1. Համաշխարհային տնտեսական աճը, ուղևորափոխադրումները, բեռնափոխադրումները և զուտ շահույթը

Աշխարհը 2020թ-ի վերջին էապես փոփոխություններ կրեց՝ ավարտելով, այսպես կոչված, ավիացիոն արդյունաբերության աճի տասնամյակը: Դա տեղի ունեցավ օդային ճանապարհորդությունների շարունակական աճին և իրացվելիությանը զուգահեռ, որը ներդրվում էր ավիացիոն ակտիվներում, քանի որ երկարաժամկետ եկամուտների նկատմամբ վստահությունը շարունակում էր աճել: Այնուամենայնիվ, չէր կանխատեսվում համաշխարհային այնպիսի տարածուն էկզոգեն ցնցում, որը COVID-19 համաճարակը ստեղծեց երկրի վրա:

Կորոնավիրուսային համաճարակը ոչնչացրել է ավիացիոն արդյունաբերությունը, քանի որ շատ ավիաընկերություններ փաստացիորեն դադարեցրել են օդային ճանապարհորդությունները խիստ սահմանափակումների հետևանքով, իսկ պահանջարկը զգալիորեն կրճատվել է: Այս խափանումը շարունակվել է մինչև 2021թ առաջին եռամսյակը:

COVID-19 համաշխարհային առողջապահական ճգնաժամը, որն առայսօր արժեցել է գրեթե երկու միլիոն կյանք և վարակել գրեթե 90 միլիոն մարդու, երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր ամենախոր գլոբալ անկումն է առաջացրել աշխարհում:Համաշխարհային տնտեսությունը և մեկ շնչին ընկնող եկամուտները կրճատվել են:Համաշխարհային համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2020թ կրճատվել է 4,4%-ով [1]:

Համաշխարհային ավիացիայի պատմության առանցքային պահերը, էվոլյուցիայի վրա ազդող իրադարձությունները 1945-2021թթ. (նկ.2) [2]:



Նկ. 2. Համաշխարհային օդային տրանսպորտի զարգացմանը խոչընդոտող իրադարձությունները [2]

Զարգացած օդային կապը սոցիալական, տնտեսական ազդեցություն է ունենում տարածաշրջանի և երկրների վրա: Շատ պետություններ կարևորում են օդային կապը և ներառում են իրենց ավիացիոն զարգացման ռազմավարություններում որպես առաջնահերթություն: Համաշխարհային ավիացիան առաջընթաց գրանցելու, կայուն համագործակցության հիմք ունենալու դեպքում, անշուշտ, մարդկությանը ավելի մեծ օդային կապի, բարեկեցության և տնտեսական գործունեության կհանգեցնի:Առաջիկա տարիներին, եթե շարունակի դիմակայել մարտահրավերներին, օդային կապի զարգացումը մեծ նշանակություն կունենա զբոսաշրջության զարգացման համար [3]:

Ճանապարհորդությունը և զբոսաշրջությունը աշխարհում տնտեսության զարգացման և աշխատատեղերի ստեղծման առանցքային ոլորտներից են: 2018 թ.-ին ոլորտի ընդհանուր ներդրումը համաշխարհային տնտեսությունում հասել է 8,8 տրիլիոն դոլարի (հավասարվելով համաշխարհային ՀՆԱ-ի 10.4% (նկ.3) [4]:



Նկ. 3. Համաշխարհային ճանապարհորդության և ՀՆԱ աճը 2011-2018թթ. [4]

Համաշխարհային տուրիստական կազմակերպության (UNWTO) տվյալների համաձայն՝ զբոսաշրջիկների 58 % փոխադրվել է օդային տրանսպորտով, ճանապարհային տրանսպորտով՝ 37%,ջրային տրանսպորտով՝ 4% և երկաթուղային տրանսպորտով՝ 2% (աղ.1) [5]:

Աղյուսակ 1

Աշխարհի ավիաընկերությունների ֆինանսատնտեսական ցուցանիշները [6]

Տարիներ	Եկամուտներ, Միլիարդ $	Աճի տեմպը, %	Ծախսեր, Միլիարդ $	Աճի տեմպը, %
2016	709	-1.6	649	-1.5
2017	755	6.5	698	7.6
2018	812	7.6	766	9.7
2019	838	3.2	795	3.7
2020	372	-55.6	477	-39.9

Վերլուծվող ժամանակահատվածում եկամուտները նվազել են -349 միլիարդ $-ով, աճի տեմպը նվազել է -49.5 %-ով: Ծախսերը նվազել են –182 միլիարդ $- ով,իսկ տարեկան աճը՝ 29.9 %-ով:

COVID-19 համավարակի պատճառով կրճատվել են օդանավերի պատվերները, ինչը սոցիալական և տնտեսական մեծ վնաս է հասցրել ավիացիոն արդյունաբերությանը (աղ. 2):

Աղյուսակ 2

ICAO-ի անդամ երկրների առևտրային տրանսպորտային նավատորմը 2010 –2019թթ. [7]

Տարիներ	Turbojet		Turboprop		Ընդհանուր ինքնաթիռների բոլոր տեսակները
	Թիվ	Տոկոս	Թիվ	Տոկոս	
2015	24 259	88.7	3 093	11.3	27 352
2016	25 060	88.9	3 117	11.1	28 177
2017	26 100	89.3	3 136	10.7	29 236
2018	27 183	89.5	3 196	10.5	30 379
2019	27 790	89.6	3 233	10.4	31 023

Համաշխարհային ավիացիայի զարգացման հիմքում կարևոր է անվտանգության մակարդակի շարունակական բարձրացումը: Վիճակագրության միտումները ներկայացնում ենք ստորև: Վթարների տարեկան վիճակագրությունը ցույց է տալիս վթարների ընդհանուր թվի և դժբախտ պատահարների համաշխարհային մակարդակի աճ: Տարածաշրջանում գրանցվել է վթարների ընդհանուր թվի 16% աճ: Մեկ միլիոն մեկնումից 2.9 դժբախտ պատահարների համաշխարհային մակարդակը 2018թ. աճել է 12 %-ով (նկ.4) [8]:



Նկ. 4. Համաշխարհային ավիացիայի անվտանգության միտումները [8]

Խնդրի արդի վիճակը. COVID-19 համավարակով պայմանավորված՝ համաշխարհային քաղաքացիական ավիացիայի առջև ծառացած խնդիրներն են՝

- օդային երթևեկության սահմանափակումները,
- դատարեցված թռիչքները,
- սահմանափակումներով գործող օդանավակայանները,
- չվացուցակի սահմանափակումները,
- ճանապարհորդության և զբոսաշրջության սահմանափակումները,
- *աշխատատեղերի կրճատումը,*
- *աշխատավարձերի կրճատումը,*
- *ավիացիոն ինքնաթիռների պատվերների կրճատումը,*
- *ավիացիոն և ուղևորների անվտանգության մակարդակը,*
- *անորոշությունը բիզնեսում,*
- *ինքնաթիռների լիզինգի տրամադրումը*:

Եզրակացություն. ՈՒսումնասիրվել և վերլուծվել են համաշխարհային ավիացիայի արտադրական, ֆինանսատնտեսական, անվտանգության ցուցանիշները և համաշխարհային քաղաքացիական ավիացիայի զարգացման միտումները:

1. Ցույց է տրվել, որ համաշխարհային ավիացիայի արդի վիճակը պայմանացորված է *COVID-19 համավարակով*, քանի որ սահմանափակումները գործում են մինչ այժմ:

2. Քովիդը սոցիալական և տնտեսական բացասական ազդեցություն է թողել տարածաշրջանի և երկրների մակարդակով:

3. Արտադրական, ֆինանսատնտեսական ցուցանիշների անկումը պայմանավորված է *COVID-19 համավարակով*: Մինչ այժմ խոչընդոտ են հանդիսացել ֆինանսական ճգնաժամերը և ահաբեկչությունները:

4. COVID-19 համավարակով պայմանավորված՝ 2020-2021թթ. զբոսաշրջության աճի միտումները նվազեցին, որի բացասական ազդեցություն շարունակվում է այժմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. The Aviation Industry Leaders Report.- 2021.-P.9.
2. Effects of Novel Coronavirus (COVID-19) on Civil Aviation: Economic Impact Analysis Montréal, Canada 14, January 2021, Air Transport Bureau.-P.4.
3. AVIATION BENEFITS BEYOND BORDERS.- JULY 2016.-P. 17.
4. TRAVEL & TOURISM GLOBAL ECONOMIC IMPACT & TRENDS.- 2019.-P. 6-7.
5. International Tourism Highlights.- 2019 Edition.-P. 3-7.
6. IATA ECONOMIC PERFORMANCE OF THE AIRLINE INDUSTRY.-December April 2021.- P.1.
7. ICAO Presentation of 2019 Air Transport Statistical Results.-P. 12.
8. ICAO SAFETY Safety Report,- 2020 Edition.-P. 5-6.

К.М. ИГИТЯН

ТЕКУЩЕЕ СОСТОЯНИЕ МИРОВОЙ ГРАЖДАНСКОЙ АВИАЦИИ

Рассмотрено современное состояние мировой гражданской авиации и показаны перспективы ее развития. Представлены основные показатели мировой гражданской авиации. Использованы годовые отчеты международных организаций, гражданской авиации ICAO, IATA, UNWTO. Подчеркиваются значимость глобальной гражданской авиации, важность туризма и экономическое влияние.

Ключевые слова: мировая авиация, авиакомпании, аэропорты, туризм, пассажирские перевозки, грузоперевозки, валовой внутренний продукт, путешествия, финансово-экономический, воздушный транспорт, безопасность.

K.M. IGITYAN

THE CURRENT STATE OF THE WORLD CIVIL AVIATION

The current state of the world civil aviation is considered and the prospects of its development are introduced. The main indicators of the world civil aviation are presented. The annual reports of international organizations, civil aviation ICAO, IATA, UNWTO are used. The importance of global civil aviation, tourism and the economic impact are emphasized.

Keyboards: world aviation, airlines, airports, tourism, passenger transportation, cargo transportation, GDP, travel, financial, economic, air transport, security.